


221



ՉԱՅՆԱԳՐԵԱԼ

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

Ի պէսս սպասաւորաց Հայաստանեայց սրբոյ  
Եկեղեցւոյ.



Ե Ր Գ Ե Ա Յ

ՅԱԿՈՎԻ ԲԱՀԱՆԱՅ ՆԱԽՈՇԵԱՆՑ.

Չ Ա Յ Ն Ա Գ Ր Ե Ա Յ

Մ Ի Ն Ա Ս Ժ Ա Հ Ա Ն Ա Յ Խ Ո Ւ Մ Ա Յ Ե Ա Ն Ց



Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Տ Պ Ա Ր Ա Ն Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ռ Յ Ս. Է Զ Մ Ի Ա Յ Ն Ի

1900




2008

ԶԱՅՆԱԳՐԵԱԼ

# Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

Ի պէս սպասաւորաց Հայաստանեայց սրբոյ  
Եկեղեցոյ.



Ե Ր Գ Ե Ա Ց

28760

ՅԱԿՈՎԻ ՔԱՀԱՆՈՅ ՆԱԽԱՇԵԱՆՑ

Զ Ա Ց Ն Ա Գ Ր Ե Ա Ց

ՄԻՆԱ ՔԱՀԱՆԱԸ ԽՈՒՄԱԾԵԱՆՑ



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՄԿՐՏԶԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ս. ԷԶՄԻԱՅՆԻ

1900

Дозволено Цензурою 18 Октября 1899 г. г. Тифлисъ.



737-2008



8101

ՆՈՐԻՆ ՎԵՀՆՓՆՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏԶԻ ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Որք միանգամ իսկգրանէ ականատես եւ սպասաւորք եղեն ի վերայ Բանին կենաց, ըստ ընտրութեան Հոգւոյն սրբոյ զուսումն գիտութեան ընդհանուր յերկիր ծաւալեցին. այսպէս և յետ նոցին երանաշնորհ սուրբ Հայրապետք մեր ի ժամանակս ժամանակս ըստ թելադրելոյ և խօսելոյ ի նոսա հոգւոյն սրբոյ՝ յօրինեցին բանս և երգեցին ի փառս Աստուծոյ, և եկեղեցիս մեր Հայաստանեայց Մայր Սիօն պայծառացեալ բերկրեցաւ զանազան հոգեբուխ աստուածախօս բանիւք, որք իբրև գքնարի հնչեցին ձայնս յանդատանի ի ծարաւուտ երկրի ի սիրտս մանկանց Սիօնի Հայաստան աշխարհի, -ազգի ազգի հրաշալի քերթուածովք, մարգարտաշար հիւսուածովք, զպատուական ակունս ի շար դասաւորեալ և ճոխացուցեալ՝ ուսուցին մեզ փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնն: Որպէս և ի սուրբ հարց երանաշնորհ ներսէս Լամբրոնացին ասէ. « ազգումն երաժշտական եղանակին ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին. քանզի չիք ինչ, որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն՝ որպէս զերգոցն ձայն, յորժամ՝ որպէս պարտն է լինիցի. վասն այսորիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն »: Եւ ըստ մարդկայինս բնութեան կարի իմաստուն և պատշաճ. զի արուեստ ե գիտութիւն եր-

զեցողութեան ազնուագոյնս առնէ զսիրտ և զբիրտ բնութիւն մարդոյ և այնու հանէ զմեզ ի վերացականն յեթերս՝ զերկնայինս խորհիլ, առ ժամանակ ինչ հեռանալ հոգևով յայս աշխարհային բազմաժողով ծովածուփ կենցաղական զբազմանց՝ առնելով զմեզ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. իսկ մերթ հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան պատելով զմեզ տխուր երգս յօրինեմք սգալ զոք և կամ զհայրենեացն վիճակ ողբալ:

Եւ առ այս ի մասնաւորի ի բերմանէ ժամանակին՝ որովհետև հետզհետէ խաթարեալ էին եկեղեցական երգեցողութեանցն եղանակ ըստ քմաց երգեցիկ արանց՝ ի ներքս ընդունելով զսիրող ազգաց երգոցն դարձուածս, երջանկայիշատակ հայրապետն Գէորգ Գ. զարման այսր տանելով՝ հաճեցաւ ըստ կարի զբնիկն յարուցանել զհայկական եղանակ երգոց, որում օժանդակ գտեալ ի հինաւորց հետէ մոռացեալ զեկեղեցիկ արհեստն Չայնազբութեան, մեծաւ հսկողութեամբ ի լոյս էած զերգս շարականաց, ժամազբոց և Ս. պատարազի երգեցողութեան, որովք արդ պաշտին հայկականս եկեղեցւոյ ժամակարգութիւն:

Ուստի և ես ըստ խնովսանն ուսեալ զհայկական ձայնազբութիւն ի Ս. Էջմիածնի, սակաւու իւրք կամէի զպարտս հատուցանել ըստ տառապեալ այրւոյն, արկանելով զլումայն իմ ի զանձանակն. և առ այս գտեալ սիրով վառեալ հնոց երգոց զբարեկրօն Տէր Յակովբ քահանայն Նախաշեանց զմիաբան Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ քաղաքիս, որ ուսեալ է ի պատեհութեան աստ ժամանեալ նուիրակաց Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի և զբազում տեղական տազս ի հագոյն քահանայից քաղաքիս լուեալ, առանց քանքարաթագոյց լինելոյ ըստ մարթանալոյն կարի իմն ճըզգրրտագոյն աւանդեաց զեղանակս հին երգոց:



Արդ, ով Աստուածարեալ Սուրբ Հայրապետ, ի յայս Ս. Յովնանդ Դ. տարեդարձի, առ ի արտայայտել և հեղուլ առ Ոսոս Գահոյից Չերում Վեհափառութեան զշնորհաւորական բարեմալթութիւնս առ Բարձրեալն Աստուած՝ վասն շնորհելոյ Սրբութեանդ զերկարամեայ երջանիկ Հայրապետութիւն ի պարծանս ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ սրբոյ, այս իսկ աղագաւ, յայս օր պատեն առիթ գտեալ խնդութեան, զի մի ունայնաձեռն երանիցեմք առաջի Սրբազան Քահանայապետիդ, վասն որոյ Չեզ վերընծայեմք զդոյզն երկասիրութիւնս մեր, որպէս զաւանդ հայրենի՝ ի տեղեկութիւն յետագայիցն մերոց սերնդոց որդւոց եկեղեցւոյս, գուցէ թէ՛ չէք ինչ հոգացեալ առաջնոցն՝ թողուլ յետնոցն իւրեանց զյիշատակս պանծալի արարոցն իւրեանց:

Եւ ըստ մարթանալոյս զընտիրս ի նոցանէ բազում ջանիւք որոշելով որպէս վարդ Մայիսեան յանապատի ի փշոց միջի՝ ընդունելով շարահիւսեցի: Իսկ առ յարգելի ձայնագրագէտս պարտ անձինս համարիմ հրաւիրել զներողամիտ զուշադրութիւնս առ դոյզն ինչ աշխատութիւնս իմ ձայնագրութեան, զի եթէ են ինչ ինչ սխալանք ի ձայնս, յել և էջս և յորպիսի և իցէ չափս հակառակ երգեցողութեան կամ արուեստի՝ հայցեմ զներողամտութիւն նոցին:

Վասն որոյ ամենախոնարհ որդիական տկնածութեամբ խնդրեմ ի Վեհափառ Տէրութենէ Չերմէ, բարեհաճել հրամայել առ ի տպագրել զայս տետր ի տպարանի Մայր Աթոռոյդ և հոգեծին լուսոյ Մօրն մերոյ Սրբոյ Էջմիածնի, որքան օրինակ և հրամայեալիք տպագրել՝ զկէս մասն ի վաճառմանէ գոյացեալ արդեանց այնք տետրկաց յատկացուցանել ձեմարանի Սրբոյ Էջմիածնի, իսկ գմիւս կէս մասն յօգուտ նո-

ըահաատատ ընկերութեան վասն ապահովութեան հո-  
գեւորականաց վիճակիս նոր-նախիջեանի և շրջակայ  
հայաբնակ գիւղօրէից նորին:

**ՉԵՐԻՔ ԸՍՏՈՒԸԾԱՐԵԼ ԿԵՀԸՓԱՌՈՒԹԵԼՆ**

*Մնամ խորին ակնածութեամբ*

ամենախոնարհ ծառայ և սրբի՝

**ՄԻՆԱՍ ՔԱՀԱՆԱՅ ԽՈՒՄԱՇԵԱՆՑ**

Ի 20<sup>ն</sup> Սեպտեմբերի 1897 ամի

ի քաղաքն Նոր-Նախիջեան:



ԵՐԳ ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆ

Ձա՛գ. Զանք.

Աստուածա
ճա
ճի
ն

ամեն օ
րհ
լ
գո
չեմք

նման էրգեա.
Ող բս
առեալ

Հասինձ
օգնու-

ա
քեզ.

զի եմ
մեղօք
վերաւորեալը

թիւ ն.

Մեջսէ շտ.

Փըր
կեա
զա
նձնիմ
զա նձն
իմ

ազատ եա
զանձն
իմ
զա նձն
իմ նե

տի ց
թը
նա մ
ւոյն.

էրգեւ ըստ վերնոյն
Մա զի
Հզօր է
թշնամինս

որ մարտնչի
անհնարին.

աշխարհ մարմին
ի միասին

Հասս ինձ նպաստ.

Երբէլ ըստ «Փրկեա զանձն իմ» —

Զերծո զանձն իմ զանձն իմ,

Ապրեցո զանձն իմ զանձն իմ

Նեախց թշնամւոյն:

Դու ապաստան մեղաւորաց,

Ազատեա զիս ի յորսողաց

Եւ ընտանի իմ թշնամեաց

Հաս ինձ օգնութիւն:

Կեցո զանձն իմ.

Ապրեցո զանձն իմ

Յանշէջ գեհնւոյն:

Ռահէ կենաց զարաւղեցայ.

Կամաց մարմնոյս հետեեցայ,

Ոհ թէ յիմարեցայ.

Հաս ինձ օգնութիւն:

Փրկեա զանձն իմ,

Ազատեա զանձն իմ

Նեախց թշնամւոյն:

Է տառապեալ անձն իմ գերի,

Յաւէտ ողբոց է արժանի

Զի խարեցայ եւ աշխարհի.

Հաս ինձ օգնութիւն.

Փրկեա զանձն իմ,

Պահեա զանձն իմ

Նեախց թշնամւոյն:

Ահա որպէս առիւծ գոշէ,

Նախաչարն այն յոյժ մոնչէ.

Խնդրէ զի զիս կլանիցէ,

Հաս ինձ նպաստ.

Զերծո զանձն իմ,

Ապրեցո զանձն

Յանշէջ գեհնւոյն:

Սրբուհի կոյս զու միայն ես.  
 Որ զվիշապին զլուխն ջաղխես  
 .Զեզ ջերմեռանդս տգատես.  
 Հաս ինձ օգնութիւն.

Փրկեա զանձն իմ զանձն իմ  
 Նեախց թշնամւոյն:

ՏԱԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Թանր.

Ա հա ս ր ծիւ թե -

ւա սա րաճ սա ւա ս-

նա ց եա լ թըռ չի

յե ր կինս ա հա թը ս-

չի յե ր կինս.

Զօգ պատառեալ սուրայ ուժգին  
 Դէպ ի հարաւ ուզդէ զթռիչս: ահա ուզդէ զթռիչս:  
 Դէտակն ի վեր արդ համբարձէք,  
 Ազդ և ազինք ամենեքեան: ազինք ամենեքեան:  
 Տեսէք զարծիւն կրկնազլուխ  
 Զիարդ սլանայ յազդ Հագարեան: սլանայ յազդ Հագարեան:

Բախիւն թևոց հզօր թռչնոցն

Համակ զՊոնտոս ալեկոծէ: զՊոնտոս ալեկոծէ:

## ՏԱՂ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ

Զատուր.

Բ ԲՊՊ Զ ԶԲ ԶԶ Բ ※  
 Աջ նա ն ա ա ա ա  
 ※ Սըր աի ի մոյ ա ըգ ֆֆ  
 ֆֆ Դու բարեաւ ծա գե ցա ը

Բ Զ Զ ԶԲ ԶԶ ԲՊՊ ԶՊՊ ԶԲ  
 Ինձ բերկ ըու թիւն ա ըգ # ե ս ի ր -

ԶԲՊՊ Բ ※ Բ ԶԲԲԲ ԶԶ Բ ԶԲ ԶԶ  
 ըու ես ի ր ըու նը լէրս

ԲՊՊ ԶԶ Բ.  
 ա նգըր կաց.

Արևն կարագեա քո պայծառ զիմաց  
 Զսիրա իմ տաց քեզ պատարագ կամաց.  
 Ծա իրրու ես իրրու ես իրրու նուէրս անդրկաց:

## ՏԱՂ ԾԱՂԿԱԶԱՐԻԻ

Զատուր.

Բ Զ Զ ԶԲ ԶԶ ԶԶԶԶ ԲՊՊ Զ  
 Այ սօր ցըն ծան ա ըա ըա ծք

Զ Զ Բ Զ ԲՊՊ ԶԶ Զ Զ Զ  
 Խրախ ծա նա պէս օրհ նու թեամբ եր կինք

Զ Բ ԶԶԶ ԶԲ ԲՊՊ Զ ԶԶ Զ ԶԶԶԶ  
 եր կիր պար առ եա լ ծա փըս ծա -

Զ ԲԶ ԶԶ Բ.  
 փի հար կա նեն.

Հոյլք ամենայն կենդանեաց վերնակառիցն բնութեանց  
Նոյնն և մարգկան պետութեանց հանդերձ ստորայնոց

դասուց:

Գարնանաշարժ յարութեամբ որոտընդոսս արթնու-  
թեամբ

Հովիտ ալեօքն ցնծայր կարկաշահոս վտակօք:

Այսօր ի լեառն սիւն նարդոսն զհոտն իւր բուրեաց

Վարդ վառ ի վառ երկն ի քուն յորդան կարմիր մա-  
նուշակ:

Լեառն ցնծայ Ձիթենեաց ծառք և ծաղկունք և շու-  
շանք

Զմեսիայն օրհնէին փոքրիկ հօան Պետրոսին:

Յնծայ հրձու ի բուրաստան յՆրուսաղէմ քաղաքի

Ելեալք ընդդէմ օրհնէին այն որ փրկեաց զնախահայրն:

Փողս հնչմամբ օրհնութեամբ սկիւածոյլ բաղձանօք

Արծաթափայլ սուրբ սրաիւ զմեր կենարար օրհնեսցուք:

Օրհնեալ որ դաս թաղաւոր որդի Դաւթի հօր մերոյ

Թաղաղութիւն ի յերկինս փառք ի բարձունս Աստուծոյ:

ԵՐԳ ԱԻՐԱԽԱԹԵԱՆ

Ձափաւոր.

ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ
Առա	ւօտ	լու	սա	րե	ր	Հա-	
* Բուրաս տան ծաղ կա				խի տ կող-			

ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ
յա ս	տան	երկ	րի	* Նախկին	լու	սա	ւո
մանց	հիւ	սի	սի.	* Թաղէ	ոս	ա	ռա

ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ	ճ
րի	չ	պը	սա	կ	պան	ծա	լի.
քեա	լ	ըն	դէ	ր	կաս	հե	ռի.





սո Ե դօւ մա յի

Ա ս տու ծայ.

Երևելի լոյս զարմանալի բոյս,  
Երանելի Կոյս, ընկզմերոյս յոյս:  
Թագ ես պարծանաց, ժառանգող կենաց,  
Իմանալի հաց, լուսատու մտաց:  
Ձե քո սոսկալի, զամբար լուսալի  
Իւզ վարդով ի լի, մայրդ հրաշալի:

ՏԱԳ Ս. ԱՅՏՈՒԱԾԱԾՆԱՅ

Չափասոր Զանբ.

Բաղ ձա լի սուրբ կոյս ե լա ն-

եալ գերքան զե ը կի նըսվեր օ ըհ նեալ:

Դուսար Եւայի դու յոյժ գովեալ  
Եւ քան զբազումս առաւելեալ:  
Զարմանալի դասուց վերնոց  
Երանելի դու ի զուարձնոց:  
Ընտրեալ գլուխ հանուրց սրբոց  
Թագ ե պսակ առաքելոց:  
Ժրագլուխ կին գովելի  
Ի մէջ փշոց վարդ հոտով լի:  
Լոյս համասփիւռ թարց ստուերի  
Խարխալս լուսոյ անգրգուելի:

Մեջևի.

ՄԻ ԲԱՐԻ ԵԿԻՐ ԻՄ ԱԿԱ ՏՈՒԱԿԱՆ ՍԻՐԵ ԼԻ ԲԱՐԻ

ԲԱՐԻ ԵԿԻՐ ԻՄ ԻՆՁ ԱԿԽԱՆ ՍԻՐԵ ԼԻ

Բարի եկիր իմ աննման սիրելի,  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:  
 Բարի եկիր իմ աչացս լոյս սիրելի  
 Բարի եկիր իմ բարի բոյս սիրելի:  
 Բարի եկիր իմ անգին կոյս սիրելի  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:  
 Բարի եկիր իմ լոյս երես սիրելի  
 Բարի եկիր իմ քաղցրատես սիրելի:  
 Բարի եկիր որ դու իմ ես սիրելի,  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:  
 Բարի եկիր իմ արեգակ իմ լուսին,  
 Բարի եկիր որ աչքերս զքեզ տեսին,  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:  
 Բարի եկիր իմ նօնաճար իմ ուհան  
 Բարի եկիր իմ մանուշակ իմ շուշան:  
 Բարի եկիր իմ կարմիր վարդ պատուական  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:  
 Բարի եկիր իմ ազաւնի իմ տատրակ,  
 Բարի եկիր իմ արտուտիկ իմ երգնակ:  
 Բարի եկիր քաղցրաբերան իմ թուլթակ  
 Բարի եկիր բարի դու հազար բարի:

Ի ՎԵՐՋ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Մանր.

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
Գո հա նա մք Ը -

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
զ քէ ն աէ Ը

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
ն Ը կե Ը ա կ Ը ե Ը Ը -

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
Ը Ը զ մե զ յա ն մա -

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
հա կա ն սե զա-

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
նո յ քո

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ

Ըստ այսմ երգելու է «Բաշխեղովն և զ«Ն» կեանք  
անձանց մերոցն:

Գոհանամք այլ եղանակ.

Մանր.

Վճարեմք իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ իմ  
Գո հա նա -



ԲՆԻՔԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 բե ցե

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 ր ըղ մե զ յա նը մա

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 հա ե

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 սե զա

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 նո յ ք՞ ե ե ե ե

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 ն սե զա

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 նո յ ք՞

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 նո յ ք՞

ՏԱՂ ԵԱՐՈՒԹԵԱՆ

Մանր.

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 րա ր ձեա Լ յա

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 յա նի ա

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ  
 յ Լ՞ նը



սուլթեամբ սեւեմ գե զո յԷ

րու թեամբ:

Ուրախ լերուք ցնծալով հրաւիրեցայ խնդուլթեամբ: Արի արի մերձաւոր իմ, սէր իմ սէր իմ ցանկալի: Շուշան ծաղիկ իմ դաշտաց և հարսն ընտիր նարդոսաց: Զի տեսանեմ զսէրն իմ բուսեալ ի մէջ նարդոսաց: Արի արի մերձաւոր իմ, սէր իմ սէր իմ ցանկալի:

ՏԱՂ ԳՈՎԱՍԱՆԵՔ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ

Մեջակ յարար:

Ես մի անգամ կուլամ քեզ համար տէրախ

դէրման սուրբկա րա պետ բարձր

լե ո նե րդ ամեն տու ման

Մուշու սուլ թան չէնկլի տի ւան:

Ահէտիքձէ սիրաս է կրակ, իւսէք տաղլար ճամբադ բարակ, Զեվրէ եանէ վարդ մանուշակ, տէրտի դէրման Ս. Կարապետ: Թո հասրէթդ սիրաս կերէ, աքըլ եէրմեզ պոյլէ եերէ. Աշխարհս ամեն քեզ կու սիրէ, Մուշու Սուլթան Ս. Կարապետ:

Հուան կամար կապէր վրադ, ճումէ ակէմէ կուտաւ  
 խրատ  
 Սանկա կելէն ալըր մուրատ, տէրտի դէրման Ս. կա-  
 րապետ:  
 Ղուլ օլմաքարը սանկա օղում, կուլամ կասեմ պու-  
 տուր սօզրմ,  
 Թօփրաղընա սիւրսէմ իւզում, Մուշու սէլվէր Ս-  
 վարդապետ:  
 Տէլի կոյնիս սէնտէն ումար, կու հառաչեմ քեզի համար-  
 Դու ես Հայոց աղղի տօմար, տէրղի դէրման Ս. կա-  
 րապետ:  
 Աքըլ եկր մեզ նորա բանին, ես փափագ եմ քո սուրբ  
 վանքին,  
 Հալու գոհար ես դու անդին, Մուշու Սուլթան չէնկ-  
 լին տիւան:  
 Ծուտա տուլէնլէր աղլասն, գլուխ ի բաց սանկա կելսն,  
 Սէն միւճի գատ սապահան, մուրատ վերէն Սուրբ կա-  
 րապետ:  
 Կեօղլէր իմ տէն քանլար կիտէր, քանի լայինէ ալպի-  
 տէր,  
 Սէնի կեօրէն մալը լէյլէր, մուրատ վերէն Ս. կարապետ:  
 Ես քեզ համար տուր մազ կուլամ, վախեմ թէ ես  
 մէճլիս լինամ,  
 Առաջնորդէ՛ որ առ քեզ գամ, տէրտի դէրման Ս.  
 կարապետ:

ԵՐԳ ԱՌ ԳԱԼՈՒՍՏ ԿՈՒՍԱԿԱԼԻՆ ՌՈՒՍԱՑ Ի ՀԱՅԱՍՏԱՆ.

Չափասոր.

բ	ն	օժ	եթ	նժ	բ	օժ	ի	օժ
Եր	գե	ցէք	աղգ	Հա	յոց	ղգա	լուստ	մե
✳ Որ	եր	բեմն	պահ	պա	նէր	զպա	րիսպ	



Ր օժ օժ ✽ ըն օժ ֆ ֆ .  
 Հը սկա յի Սուրբիջ մի ա ծ նի .

Աթոռն աստուածիջեան ձեռամբ սորա փրկեցաւ .  
 Անտերունջ հայկազանց տէր և փրկիչ յայտնեցաւ  
 Եւրոպ և Ասիա զանուն սորին հրոչակեր :  
 Յաղթական հիւս ծաղկանց ի զուխ սորին բոլորեր :  
 Անառիկն Երեան և սիլիսորա զըլորի :  
 Առաջի երեսաց սոյն խաչադրօշ հսկայի :  
 Ազգ Հայոց միարան սմա երգեցէք փառաւոր :  
 Թէ կրկին յաղթութիւն քո եղիցի շնորհաւոր :

ՏԱՂ ԱԶԳԱՅԻՆ

Ծանր .

ՏՅՅՅ ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն  
 Թա գ փառաց մերո ց ա յը

ՏՅՅ ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն  
 ցանկա լի գո հար ան-

ՏՅՅ ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն  
 գի ն գա նձ գովե լի .

ըստ այսմ երգելու .

Միշտ ի հոգիս սէր քո վառի  
 Մեծ նախարար Մամիկոնեան  
 Սուր սայրասուր Սմբատ իշխան .

Մեղակ .

Տ ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն  
 Ա ու ծ ա բի ա ն պար տե լի ե -

Տ ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն ըն  
 կ ե կ սէր իմ :

Յաշխարհ ծինաց ամպ ահագին  
 Փայլատակեալ շանթ հրածին,  
 Բաջ Մամիկոն վեհ քո նախկին: Մեծ նախարար ելնե  
 Հանձար քո սուր տէգ բոցեղէն,  
 Տապաստ յերկիր արկ զՍուրէն  
 Պարսից զօրուն զպէան անօրէն: Մեծ նախարար ելն:  
 Միհրան իշխան օձ բնածին,  
 Քե ընկալաւ մահ դառնագին  
 Դու արագիլ այս հայկազին: Մեծ նախարար ելն:  
 Բաջազուն հօր դու քաջ ժառանգ,  
 Որպէս բազէ թե քո արագ  
 Հասեր հարեր դու զՎախտանգ: Մեծ նախարար ելն:

ՈՂԲ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Մանր.

Իհաջ ել եա Լ բե ւե-  
 ուե ցա ր դառնակըս կի -  
 Զարչա րե -  
 ցա ր " -  
 ր դեա կ.

Արևս այսօր խաւարեցաւ,

Հոյս աչացս իմ նուազեցաւ, որդեակ.

Ռ ր դեա կ ի մ

մի ա ծի ն ո ր դեակ.

Ահա սիրտս իմ վառեցաւ

Արիւն յերակս իմ սառեցաւ, որդեակ.

Որդեակ իմ միաժին, Յիսուս որդեակ:

Եհասս առիս պատգամն նոյն

Հստ կանխասաց սուրբ ծերունւոյն, որդեակ.

Որդեակ իմ միաժին, Յիսուս որդեակ:

ԵՐԳ ՍՐԲԱԶԱՆ ՆԵՐՍԷՍ ԱՐՀԻՆ Ի ՅՈՎՀԱՆՆԷ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԷ.

Մանր.

Ո կան խա դէտ տես չու թե նէ անեղ է -

Ի ն սա հ մտ նի յայդանուն այր ծը նունդ

որ նու նդ Արարա տես ն սահ մա-

\* ըստընալե լո ց պայ մա-

նի ա կն ա րեւու \*

նի առ շն առ հա ցո ԵԳ.

737-2008



ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ  
 Ո՛Տ յ լոր տա ցեա լ ան զըս տի ն ա նդ  
 Ըջմիա ծի ն անուա նի:

Համաժորան հոգւոյն աղբիւր զետահետեալ ի սրաէ,  
 Ագինայն առնկ իմանալի լիապատար առողէ, սէր սըր-  
 րամիտ.  
 Ո՛Տ նոյն և ողինս և ազազունս թարմացուցեալ բողբոջէ,  
 Մախանձաւոր զհեռակայս մեծ համբաւոյն իւր գործէ.  
 րախ բենամբարձ:  
 Էական կամք զիրն ցուցեալ առ արամեանս սուրբ սէր.  
 Սերմանահան ի հին Տփղիս նպաստ Մունիա հասանէր,  
 րարձր րարձրնտիր.  
 Ո՛Տ ելք զժնկի սերմանահեղձ ըստ իւր թափոյն պա-  
 րուրէր.  
 Պուրակացիր մակամացառ ինքնարորբոք հուրբ առնէր.  
 այր արբաձեմ:

ԵՐԳ Ի ԴԷՄՍ ԼԱՅԱՍՏԱՆԻ

Յոյրդու:

ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ  
 Խըն գայ այ սօր Հա յաս տան հայ -  
 ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ ԲՆ  
 րե նիք մեր սի րա կան.

Նկայք եղբարք միարան  
 Հիցուք զտեառնէ գոհարան:  
 Բարձրացո արգ Արարատ  
 Տխուր թախիժ քոյդ գագաթ.



Եկայք եղբարք. և լն:

Փայլեսցի խաչ Զբիսառոսի:

Ի լոյս ճակաս հայ ազգի:

Եկայք եղբարք. և լն:

Մեծ են փառք քո արարիչ:

Մեծ են քո շնորհ տէր Փրկիչ:

Եկայք եղբարք. և լն:

Մեր կեանք մեր փառք յաւիտեան:

Զոհեսցի քեզ Հայաստան:

Եկայք եղբարք. և լն:

### ՏԱԳ ԵՐԵՒՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

Զափառք շահր:

Ք՜՜՜    Ե՛՛՛    Ք՜՜՜    Ք՜՜՜    Ք՜՜՜՜    Ք՜՜՜՜  
 Խաչնի    նախ    նու    մն    և

Ք՜՜՜    Ե՛՛՛    Ե՛՛՛    Ե    Ք՜՜՜՜՜    Ք՜՜՜    Ե՛՛՛    Ք՜՜՜  
 րե    և    ցա    և    ծա    զ    կեա    լ

Ք՜՜՜    Ե    Ե՛՛՛    Ե՛՛՛    Ե՛՛՛    Ք՜՜՜՜    Ք՜՜՜    Ք՜՜՜  
 ի    դրա    խան    ա    սա-

Ք՜՜՜    Ե՛՛՛    Ե՛՛՛    Ե՛՛՛  
 ուա    ծա    տու    նկ:

Մխիթարիչ եղև Սեթայ, նախագուշակ հօրն Ադամայ,  
 Մեք ի յայն փայնն եմք յուսացեալ, յոր տէր Յիսուս  
 բեկեռեցաւ:

Եւ խոնարհեալ երկրպագեմք աստուածընկալ սուրբ  
 նշանիս:

Ի յերրորդումն Երեկեցաւ խաչն Մոյնայ նահագեալին,  
 Առեալ հրաման կազմեալ տապան օրինակաւ սրբոյ Խա-  
 չին: Մեք ի յայն. և լն:





Նման « Կանայք ամբնային »

Ողբս յօրինեցէք երգօք զանազան.  
 Սըգալի Մարիամն այժմ՝ անօգնական  
 Կարօտով իմ՝ Որդւոյս կամ ի յիրերման: Լացէք:  
 Ով դուք մեղաւորք որդիք Ազամայ  
 Վասն ձեր խաչի որդին Մարիամայ,  
 Զի բացցէ զփակեալ դուռն Եզեմայ: Լացէք.  
 Ով թռչունք երկնից և ձկունք ծովու  
 Լոյս արեգական աստղ առաւօտու  
 Ահա մթացաւ օրն լուսատու: Լացէք.  
 Ով սուրբ Սիմէօն գովեալ ճերտունի  
 Ահա կանխասաց բան քո կատարի.  
 Արդ էանց անձն իմ՝ սուր նենգաւորի: Լացէք.  
 Զօրութիւն հզօր հրեշտակք երկնային  
 Պետք և պետութիւնք և զօրք երկնային  
 Տեսէք զիմ որդին խաչեալն ի փայտին: Լացէք.  
 Ծորածին մանկունք սուրբ աւաղանին  
 Գեղարդեամբ խոցի որդեակս ի խաչին,  
 Զուր առաս բաշխէ ծննդեան ձեզ կրկին: Լացէք.  
 Կանայք պատուականք դստերք Յւայի  
 Որք գիտէք զգութ ճնողաց սրտի.  
 Հոգիս մորսնքի սիրաս կսկծի: Լացէք.  
 Մայրք Լիրանանու և ծառք անտառաց  
 Նրանենիք այգեաց և տունկք պարտիզաց  
 Ժողք և գետք և ջուրք աղբերաց: Լացէք:

ՏԱՂ ՀԱՅԲԱՊԵՏԱՅ

Մանր.

Հա յ րա պե տա ց



Հա նուրց ա զ զի ն վա ր-

դա պե տաց ու զի զ

բա նին.

Որ զքեզ Որդի Հօր միածին  
 Խոստովանիլ մեզ ուսուցին:  
 Սպասաւորաց սուրբ խորհրդոյն  
 Յիննեակ դասուց եկեղեցւոյ  
 Համանմանեաց վերնագունից  
 Փառաարողացն անձանցն երից:  
 Ծակ նոցունց որք են յերկինս  
 Հայցմամբն ուղղեալ զիս մոլեգինս,  
 Որք և վասն իմ քեզ պաղատին,  
 Անտես չառնել զգործս ձեռին:

### ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ձափա-որ.

Հայրե նա սէր Ա բամ եանք զի կայք ի քուն.

ըն կըզ մեալ.

Բացէք զաչս ձեր հոգեկան  
 Տեսէք զօր ձեր ժամանեալ.  
 Ուր են փառք ձիր ձեր նախնեաց,  
 Ուր են պատիւ վեհ արանց:

Որք զաշխարհ Հայաստաննայց  
 Լըցին պարուք զիւցաղանց:  
 Յառաջ մատիք ինձ լսել  
 Շառաւիղք քաջին Հայկայ,  
 Ես կամիմ Ձեզ արդ պատմել,  
 Զազգասէր զործ Վարդանայ:  
 Որ զգլուխ իւր կենօք չափ  
 Եդ ի փրկանս իւր ազգի  
 Եւ կնքեալ զայն իւր արեամբ  
 Եղև փրկիչ Հայրենի:

ՅԱԳ ԽԱԶԻ

Մանր.

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 Հաւի կ մի

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 պայծառ տեսի ա ն նրմա ն

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 ի յս յն խա -

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 շա փայ տին վե լայ ա ն նը ման

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 աննը մա նի դ

ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ ԲՐԻՆ  
 ով նրմա ն դու նը մա ն .

Զթեևս արծաթափայլս ունէր աննրման.  
 Արեգական շողոյ նման աննրման աննրմանիդ, ևլն:  
 Զձայնիկն ողորմուկ ածէր աննրմանս

Գարբիէլեան փողոյն նման աննրմանս աննրմանիդ, Լէն:  
Զաչերն արտասուօք լընոյր աննրմանս:

Առաւօտեան ցողոյն նման աննրմանս աննրմանիդ, Լէն:

ԵՐԳ ԲԱՐԵԿԱՄԻ

Մանր.

Ձեռա ցել ե մ իմ մա յ ըննի

աշխա ը հի ց սերտրա ը կամք անջա -

տած ե ն ինձա նից Լ կամ. հեռա ցել ե մ

իմ մա յ ըննի աշխա ը հի ց

սերտ րա ը կամք անջա տած ե ն

ինձա նից.

Թառամում եմ ես այս օտար երկրումը  
Մենակ բուսած ծաղկի նման դաշտումը:  
Կամաց կամաց տարիներս անցնում են  
Մեզ նորոգած գարուն ամառ դարձնում են,  
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր  
ինձ երեկը կրկնուում է միշտ այսօր:  
Ասպարիզիս նեղ է ճանրան ու փշոտ  
Մեղձութիւնս համարում են ինձ ամօթ,  
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի

Դա՛ս ասու՛մ են իւր կեանքումը դարտ չունիւ  
 Ես դարտ ունի՛մ, դարաս մե՛ծ է ու պէսպէս  
 Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես,  
 Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ  
 Զանի՛ր ըոպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ:  
 Հա՛ս ասացի դարձել է իմ անիւր  
 Լրացել է իմ վատ բաղդի չար թիւը,  
 Յանկարծ փչեց անդուրժելի հիւսիսին  
 Թառամեցուց վարդ մանուշակ մայիսին:  
 Այսպէս չորցուց իմ նազելի հասակը  
 Իմ անողորմ, անագորոյն վիճակը.  
 Ախ՛ս մօտեցիր օրհասական օր մահուան  
 Բեր քու հետդ սև հող ու նեղ գերեզման:  
 Թող սառն լինի իմ նոր տանը յատակը  
 Ծանր քար է վրաս ծածկած վերմակը,  
 Բայց ախ՛ս երբ որ կանցնի ամիս ու տարի  
 Կը մամռոտի գերեզմանը այն քարի:  
 Հեռքը անգամ չի մնալու իմ խաչին  
 Իմ անունը իմ յիշատակ կը կորչին,  
 Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան  
 Որ դարէ դար մնար ամուր անկործան:  
 Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ  
 Իմ քնարի ձայներ մեղմիկ ու քնքուշ,  
 Մի՛թէ այնքան անգութ կը լինի լետա գետ  
 Որ անունս անգամ կանէ նա անհետ:

ՏԱՂ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ

Մանր.

Հու	ըըն սի	ըո	յ	մի	շա
※	ի	մոյս ա	զ	գի	※





Զի զոր տեսին վկայեցին  
 Աստուածն Բան Էառ մարմին.  
 Աւետիս ձեզ մոզք և հովիւք.  
 Աւետիս ձեզ յայլ և մտւր  
 Աւետիս կոյսդ, որ ծնար զԶրիստոս ի յայրին:  
 Տէրն մեր յերկնից խոնարհեցաւ.  
 Յայրն աղքատաց իջեալ ծնաւ,  
 Անբան անձինքս իմաստնացար,  
 Զհացն ի մտոյ ծաշակեցար.  
 Աւետիս ձեզ աղքատք հոգւով,  
 Աւետիս ձեզ հաւատացեալք,  
 Աւետիս դստերց վերինն սիօնի:  
 Այսօր բերկրին մարմնով յերկրի  
 Որք թագաւորեն յաշխարհի,  
 Եւ քահանայք պարեն խնջոյս  
 Մարութ մանկամբ եկեղեցւոյս.  
 Աւետիս ձեզ մեծ թագաւորք  
 Աւետիս ձեզ սուրբ քահանայք  
 Աւետիս արքայածին մօր սուրբ Կուսին:

## ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻ ՄԵՍԻ ՊԱՀՈՑ

Մանր.

ԲՊԲՊ ԲՊ ԾՊ ԾՊ ԾՊԲՊ ԾՊ ԾՊ ԾՊ ԾՊ  
 Ծա նա պա րհ րա -  
 ԲՊԾՊԾՊ ԾՊ ԲՊԾՊ ԲՊԾՊ ԾՊԾՊ ԾՊ  
 րի Զրի ա տո ս  
 ԾՊԲՊ ԾՊԾՊ ԾՊ ԲՊ ԾՊ ԲՊԾՊ ԾՊ  
 Ե Ըշմա ր տու թիւն  
 ԲՊԲՊ ԲՊԾՊ ԾՊ ԲՊԾՊ ԲՊԾՊ ԾՊ ԲՊԾՊ  
 ա աաջ նո րդ հոգւո-





## ՏԱԴ ԵԿԵՂԵՑԻՈՅ որ ասի զինն Գոհանամբի:

Փանր. Չափ.

ԱՅՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ  
Մա յի հա ւա տո -

ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ  
յ սուրբ հարս նա րա ն

ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ  
ե ւ ա ու գա -

ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ  
ստ գերա դրա կա -

ԵՄՆԻ ԵՄՆԻ ԵՄՆԻ  
ն :

Դու փեսայիդ անմահական

Որ զարդարեաց զքեզ անվախճան:

Երկրորդ երկինք դու հրեշտակական

Փառաց ի փառս բարձրական.

Որ զմեզ ծնանիս լուսոյ նման

Աւազանաւն որդիական:

Բաշխես զհացն մաքրական

Չարիւն ըմպել տաս սոսկական:

Հանես ի վեր քո աստիճան

Իմանալեացն անզուգական:

Եկայք որդիք նոր սիօնի

Մատիք առ տէր մեր սրբութեամբ:

Ծաշակեցէք և տեսէք

Զի քաղցր է տէր մեր զօրութեամբ:

Նա բաժանեաց զՅորդանան

Դու զճով մեղաց աշխարհական

Մման Յեսու մեծ զօրական  
 Զքեզ Տէր Յիսուս Հօր էական:  
 Հինն օրինակ քեզ և նրման  
 Դու խորանին զերազրական  
 Մա խորտակեաց դրունս  
 Դու դժօխոց զգրունան ի հիմանց:  
 Հացս այս մարմին է Քրիստոսի  
 Բաժակս արիւն նորոյ ուխտի  
 Ժածկեալ խորհուրդն մեծ յայտնի  
 Աստուած ի սմա մեզ տեսանի:  
 Սա է Քրիստոս Բանն Աստուած,  
 Որ ընդ աջմէ Հօրն բազմի  
 Եւ աստ ի մեզ պատարազի  
 Բառնայ զմեզս աշխարհի:  
 Այն որ օրհնեալ է յաւիտեան  
 Հարբ և հոգւովն միաբան  
 Այժմ և յաւէտ և յապագայն  
 Եւ յանսպառ միշտ յաւիտեան:

ՏԱՂ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ

Չափաւոր.

Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ Բ  
 Մայր ցան կա լի հի ա նա լի յոյժ

Բ Բ Բ Բ Բ Բ Բ  
 տեն չա լի ա ներ ման:

Ժաղիկ լուսոյ անտանելոյ դու երկնային օթարան:  
 Կոյս զովելի երանելի միշտ սխրալի Մարիամ  
 Մայր զովելի դրուատելի ներբողելի Մարիամ:  
 Անսպական մայր իսկական կոյս եզական տիրուհի



ՏՏՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏ ՏՏՏՏՏ ՏՏՏՏՏ ՏՏ  
 Հի Իս կու Հի սը ր բու Հի

ՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏ ՏՏՏՏ ՏՏ ՏՏՏՏՏՏ  
 ՂԸ շխո յի աստուա ծա յի ն

ՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏ ՏՏ.  
 շնո րհօք լի .

Յարժամ յոյս յարժամ յոյս  
 Միշտ բարեխօս առ Յիսուս  
 Երանուհի մայր և կոյս.  
 Գեղեցիկ տիրուհի, գեղեցիկ տիրուհի, գեղեցիկ  
 տիրուհի.  
 Թագուհի, Իսկուհի, Սրբուհի, Դշխոյի  
 Աստուածային շնորհօք լի:

ՏԱՂ. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Չափաւոր Ժանր.

ՏՏՏՏՏ ՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏՏՏ ՏՏՏ ՏՏՏՏՏ  
 Մա րի ա մ մա դ դա զե -

ՏՏՏՏ ՏՏ ՏՏՏՏ ՏՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏ ՏՏՏՏՏ  
 նի ն փա րէ ր ի

ՏՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏՏ ՏՏՏ ՏՏ.  
 մէ ջ պա ր տի զին: կրկնէ

Սև հանդիպեալ Յիսուսի (կրկնէ)  
 Ասէ զի լաս դու ով կին (կրկնէ)  
 Զի լաս, զի լաս, զի լաս Մարիամ (կրկնէ)  
 Կամ զո խնդրես ցաւազին. (կրկնէ)

Մի լարս մի լարս մի լար Մարիամ (կրկնէ)  
 Ես եմ որդին միածինս (կրկնէ)  
 Սաղարթախիտ արմատինս (կրկնէ)  
 Բեւեռեցայ ի փայտին (կրկնէ)  
 Կնքեալ կոյս գերեզմանինս (կրկնէ)  
 Յարեայ կամօք հօր վերինս (կրկնէ) Զի լաս և ընս

### ՏԱՂ. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Մանր.

Միա շա բաթ օր հա ն-

զը ս աեան կա նա յք ե կի -

ն ի գե բե ղ ման.

Եւ որբային արտասոււական խնդրել զՅիսուս անապական:  
 Զայնեաց հրեշտակն ուրախական զայն որ եզին ի գե-  
 բեզմանս

Զեզ աւետիս յարեաւ փեսայն զբունք զժոխոց խոր-  
 տակեցանս

Մարիամեանքն ուրախացան և յԱստուծոյ միշտ զոհա-  
 ցանս

Առ աշակերտն անգրէն դարձան ապա աւետիս վասն  
 յարութեանս

Պետրոս ելեալ և սուրբն Յօհաննս նորա եկին ի գերեզմանս

Տեսին զկտաւս և զարմացան և զՍերովբէ հօլաթեանս

Յորժամ տեսին հաստաանցանս երկրպագին խոնարհա-  
 կանս

Յիսուս յառաջ եղեալ պայման ի Գալիլիա ժողովեցանս

Պատուէր տուեալ աստուածական, մաքուր դասուն այն  
մետասան

Նրթեալ չորեքանկեան և քարոզել զԱւետարանն:

Քարոզել միշտ և անխափան զԱւետարանն աստուածա-  
կան

Ձերրորդութիւն միասնական չորեք անձինքն յատկական:

ԶԹումմաս կոչեա ողորդական, քաղցրարտաբառ ճայն  
տիրական:

Յիս մերձեցո զձեռդ յանդիման, սոյն կենդանին եմ յա-  
ւիտեան:

Դրունք դժոխոց խորտակեցան, նիզ երկաթիքս փշրեցան:

Հոգիքն որ անդրէն զընտան տեառն շնորհիւ ազատեցան:

Ի տապանաց մեռեալք յարեան յԵրուսաղէմ ընթացան

Նւ որք տեսին զայն զարմացան և փառս տան սուրբ  
յարութեան:

Աշակերտել զորդիս մտրդկան արժան առնել մկրտու-  
թեան

ԶՏէր քարոզել միշտ անխափան և փառս տալ Նրրոր-  
դութեան:

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Մանր.

Յայդ ւս յն մի ա

շա բա թին իւ զա բե ը-

քը ն լա լա զին ի գե բե զ-

մա ն չա սա-









Թափօւր տեսին զանգինս ուր կայր մարմինն Յիսուսին  
 ծալեալ էր վարշամակըն կնքեալ կոյս գերեզմանին  
 Յոհան ընդ վէժ հաւատին մտեալ ի գերեզմանին  
 Տեսին և հաւատացին զՔրիստոս Աստուած կենդանին:

ՏԱՂ. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ծանօք.

Յա ըստ ցի  
 ի թա զ մա նէ

ս լէ լաւ իս  
 ե ըբ ք օ ր ես

յ նո ր փե սս յի

զ ե կե զե ց լո

յ յի ըգս օ ըհ նու  
 ֆ ս լէ լու

թեա ն ս լէ լու  
 իա ս լէ լու

իա ֆ իս

ՊԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԳԱՊԵՏԷ  
ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ

Մեջևի. չափաւոր.

ձ՛վ ձ՛ր ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն  
Յերկու ձեռին յերկու մո՛ւ մ՛ ինձընդ

ձ՛ն ձ՛ր ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն  
ա ուջ ելի տուն միհար ցանէք ով էր նա

ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն ձ՛ն  
Հրեշտակ թէ կոյս

ձ՛ն ձ՛ն .  
լուսա գեղ:

Ամօթն զնա վարդ արար  
Ես հիացեալ դարձայ քար:  
Այն ինչ օր էր և ինչ ժամ  
Յորմէ տեսի ես կեանք նոր:  
Հիաճրագ յայնմիկ տան  
Ի մարգաշատ բազմութեան  
Ի մէջ աղջկանց և հարսանց  
Յոտին կայր ոմն անդ յանկեան:  
Այն օրիորդն էր պարկեշտ  
Ինչ պատահեալ առ դրամբ տան  
Զոգիս գրաւեաց յիւր ի սեր  
Ի նմա տեսի ես կեանք նոր:  
Մարգարտափայլ մարմինն էր  
Հասակն էր յոյժ վայելուչ  
Զոտիւքն իւր վարսք քարշ կային  
Ի գոյն քրքմոյ փայլէին:  
Դիմաց շքեղ երևոյլթ

Թօնից, աչաց, այտից գեղ  
 Շրթանց լեզուին համանոյշ  
 Խոստանային ինձ կեանք նոր:  
 Ախ ասացի թըմրեցայ  
 Սիրտս սկսաւ գողգողալ  
 Չաշխարհ համայն մոռացայ  
 Ի գեղ կուսին ափշեցայ:  
 Բամբ կոչեցելոցն յայն հանդէս  
 Ընդ իմ մեծ բաղդ մախային  
 Զի մերձաւորք այն կուսին  
 Փեսայ զանձն իմ ձայնէին:  
 Եթէ զաշխարհ լի գանձիւք  
 Ինձ ոք տուեալ ի պարգև  
 Ով տեսանէր այնքան բախ  
 Որքան ի գալս առ կուսին:  
 Արդեօք գուցէ յաշխարհի  
 Սիրոյ նման ինչ հզօր,  
 Սէր ի ձեռաց արարչին  
 Մեզ մահացուացս է ձիր նորա:  
 Նանրախորհուրդ ազգ մարդկան  
 Շատ մի՛ սիրեր գու զաշխարհ  
 Նա թշնամի է, անգու թ  
 Չար քան զքարբ մահաթոյն:  
 Յանցիւ սիրոյ զքեզ կարթէ  
 Ի հազր անել ըմբռնէ,  
 Ապա զսիրոյդ առարկայ  
 Ի քէն արագ կողոպտէ:

## ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Մանր.

ԲՐՅԻՐ      Ը,      ԲՐՅԻՐԻՐ      Ը "      ԲՐՅ      ԲՐՅ  
 Թորժամեղե      Լ      գարու      ն      արե      Լ

բարձր և աստուծոյ հարաւ հընչեալ ց սառը-  
 թո՛ւմ և աստուծո՛ւ .  
 ն հալե ցաւ :

Երկիր կանանչացաւ ծառն ծաղկեցաւ  
 Խմենք եղբարք զինին ձեզ անոյշ լինի .  
 Աղաներ բանդ Աստուած լինի :  
 Ով եղբարք նստեալ էք ծաղկեալ ծառի տակ  
 Ձեռքերնիդ զինի կարմիր ու սպիտակ  
 Թասի մեջ անկանի վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :  
 Վաղիւն ոչ զիտէք թէ զինչ ծնանի  
 Մարդուս կեանքը վայրի ծաղկի նմանի  
 Որ այսօր բացեալ է վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :

ԵՐԳ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ

Չափաւոր .

Բարձր և աստուծոյ հարաւ հընչեալ ց սառը-  
 թո՛ւմ և աստուծո՛ւ .  
 ն հալե ցաւ :

Երկիր կանանչացաւ ծառն ծաղկեցաւ  
 Խմենք եղբարք զինին ձեզ անոյշ լինի .  
 Աղաներ բանդ Աստուած լինի :  
 Ով եղբարք նստեալ էք ծաղկեալ ծառի տակ  
 Ձեռքերնիդ զինի կարմիր ու սպիտակ  
 Թասի մեջ անկանի վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :  
 Վաղիւն ոչ զիտէք թէ զինչ ծնանի  
 Մարդուս կեանքը վայրի ծաղկի նմանի  
 Որ այսօր բացեալ է վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :

Երկիր կանանչացաւ ծառն ծաղկեցաւ  
 Խմենք եղբարք զինին ձեզ անոյշ լինի .  
 Աղաներ բանդ Աստուած լինի :  
 Ով եղբարք նստեալ էք ծաղկեալ ծառի տակ  
 Ձեռքերնիդ զինի կարմիր ու սպիտակ  
 Թասի մեջ անկանի վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :  
 Վաղիւն ոչ զիտէք թէ զինչ ծնանի  
 Մարդուս կեանքը վայրի ծաղկի նմանի  
 Որ այսօր բացեալ է վաղիւն անցանի . Խմենք եղբարք և լն :

Ո՞ւր է հնչիւն քո լայնալիճ աղեղան ո՛հ,  
 Բաջ զօրավար Մամիկոնեան Գայլ Վահան սէր իմ:  
 Փող բարձրացեալ, որոտացեալ ի Տարօն  
 Վարատեցեր զԹշնամիս ի Յրօն  
 Ընդէ՞ր լռես ով դիւցազինդ բարեկրօն  
 Բաջ զօրավար Մամիկոնեան Գայլ Վահան սէր իմ:  
 Գետ բոցեղէն բղխեալ յաշխարհ Հայաստան  
 Ժաւալեցեր որպէս զհօւր եղեգան,  
 Որով կիզեր զսպարապետն Միհրան.  
 Բաջ զօրավար Մամիկոնեան Գայլ Վահան սէր իմ:  
 Բաջաց ծենաց քաջ շառաւիղ բարեկիր  
 Խոհեմ, արի, անպարտելի մարտագիր  
 Ի մահ հարեր զիշխան զօրուն զվարշիր,  
 Բաջ զօրավար Մամիկոնեան Գայլ Վահան սէր իմ:

ՏԱՂ ՀՈԳԻՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Մանր.

բ	օօօօօօ	ի	օօօօօօ	օօօօօօ	օօօօօօ
Մեր	հիւ	սես	ցու		
օօօօօօ	բօօօօօօօօօ	օօօօ	բ	օօօօօօ	բօօօօ
			ք	զքաղցրե	
բօօօօօօ	բօօօօօօ	օօօօօօ	օօօօօօ	օօօօօօ	օօօօօօ
ղա		նա կ	վայել	չա	հիւ-
օօօօօօօօ	օօօօօօ	օօօօօօ	բօօօօօօ	բօօօօօօ	բ
	ս	ե րից	ա		ն-
օօօօօօօօ	բ				
ձա	նց:				



ր օ ր օ ր օ  
 ր օ

Դու, որ յերկինս ահիւ պատուիս ձեռամբ իմով աստէն պատիս օր օր Երկինք չէին քեզ բաւական, բայց ես եղէ քեզ կայարան, օր օր Զքեզ, որ ձեռքն իմ արդ շօշափեն, դասք հրեշտակաց ահիւ պատուեն, օր օր Դու, որ ձեռամբ զաշխարհս ունիս, կաշնուս զստինս իմ և դիկս, օր օր Աշխարհս բոլոր ի քում ձեռին, և դու բոլոր յիմում ձեռին, օր օր Երկինք աթոռ են քեզ և կան, երկիրս ոտից քոց պատուանդան, օր օր Բայց արդ բազուկն իմ աթոռ քո, բարձի իմ պատուական ոտից քոց, օր Եաստուածային շրթանց որդւոյս, մեղր կաթեն համբոյրքն հոգւոյս, օր Մինչ համբուրիմ յաստուածորդւոյս, բղխին ի յիս պարգևք և լոյս, օր օր Մինչ համբուրեմ զաստուածորդիս, բազմօք շնորհօք ընանի հոգիս, օր օր Պաշտեմ, զի սա է Աստուած իմ և համբուրեմ իբր որդեակ իմ, օր օր Զայն՝ զոր ծնայ պաշտեմ հոգւով և զոր պաշտեմ ծնայ մարմնով, օր օր Մանուկ փոքրիկ, աստուած անկուն, քաղցրիկ որդեակ իմ կաթնասուն, օր օր



Դասք երկնայնոց յառաջ մատիք, երգել չքնարեր երգ  
 անուշիկ երգեցէք, օր:  
 Ով սերօբէք թեւասքօղեալ հանդէպ որդւոյս զձեզ սքօ-  
 ղեալ, օր, օր:  
 Քերօբէից դասք սրբագոյն, երգեցէք զերգ ձեր քաղց-  
 րագոյն, օր, օր:  
 Դասք աթոռոց արդ հանգուցէք, զտէր ձեր մարմնով  
 ննջեցուցէք, երգեցէք:  
 Ով տէրու-թիւնք տիրողին ձեր, բերէք ըզքուն զուար-  
 թարեր, երգեցէք, օր, օր:  
 Դասք պետութեանց՝ պետին ձերոյ պատրաստեցէք զնիւթ  
 քնոյ, երգեցէք, օր, օր:  
 Ոչխանութեանց հոյլ պար առէք, շուջ զօրոցիւս և  
 երգեցէք, երգեցէք, օր, օր:  
 Դասք զօրութեանց դուք հսկեցէք, ննջելոյ ըսպասե-  
 ցէք, երգեցէք օր, օր:  
 Հրեշտակապետք յառաջ մատիք, հաւաքեցէք որդւոյս  
 ծաղիկ, երգեցէք, օր, օր:  
 Հրեշտակաց դասք զծաղկունս բերէք, շուրջ զօրոցիւս  
 այս սփռեցէք, երգեցէք, օր:  
 Սուրբ Յովհաննէս մանկիկ քաղցրիկ, շարժեա զօրոցդ  
 այդ հանդարտիկ, երգեա դու օր:  
 Մի՛ բարձրագոչ ձայնիւ երգեր, այլ քաղցը երգեա և  
 հանդարտ լեր, երգեա դու, օր:  
 Մինչ է ննջեալ մի՛ համբուրեր, մի՛ ի քնոյ զարթու-  
 ցաներ, երգեա դու օր, օր:  
 Ծակ զոտ իւր մի՛ համբուրեր, այլ օրելոյդ յուշագիր  
 լեր, երգեա դու, օր:  
 Այժմ՝ ոչ է ժամ քեզ խայտալոյ, զօրդուով իմով խան-  
 դաղելոյ, երգեա դու օր, օր:  
 Յորժամ զարթնու ի քնոյ իւր, յայնժամ խայտա՛ ցըն-  
 ծա՛ ընդ իւր, երգեա դու:







Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն

Ուր գտանեմք քեզ նման որդի:  
 Ուր ես որդեակ գառնուկ նազելի  
 Աչացս լոյս անբիծ ազաւնի:  
 Հազար եղուկ մօրս քո կուսի  
 Զքեզ ուշ գտի եւ շուտ կորուսի:  
 Մէկ տեսանեմ զերեսդ քաղցրայի  
 Այնուհետեւ թոյ մայրդ մեռանի:

ՏԱԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Չափաւոր.

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Պա 2 տե լի տօ նե լի գահ սուրբ

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Գրի գո ըր լու սա լի հրա շա լի

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 Կար ծանք աշ խար հի իջ ման Յի սու սի

Երբ որ զայն արարեալսն զայն արարեալսն  
 մի ա ծին տե զի հարս նըգ Բրիս տո սի

ր և և և և և և և և և և և  
 ան մահ փե սա յի և Դա նի էլ մեծ պատ-  
 րի ա ր գի:

Օգոստոս Սեփաստոս կայսր համայն Ռուսաց  
 Ալեքսանդր Պաւլովիչ ահարկու բազմաց  
 Յուսամ առ Աստուած, որ զմեզ աստ էած  
 ի բանիլ ռազմաց ի վերայ Պարսկաց  
 Հասուցանել զմեզ բաղձանաց:  
 Լիապէս վաղապէս կամիմ հաստանել  
 Մեծ կոմսիս ասպետիս պատգամ առաքել,  
 Սաստիկ հրամայել գունդ զօրաց սփռել  
 ԶԵրևան պատել և տիրապետել  
 Եւ զօրս ի նա ընդ բռամբ նուաճել:  
 Սէր արփի քան զարփի սուրբ եկեղեցի  
 Արդ ցնծա և խնդա ահա վճռեցի  
 Փեսայ փառացի Սանահնեցի  
 Է նա Կերտեցի չեղեալ մի լիցի  
 Այլ յազգէն և ի մէնջ ընտրեսցի:  
 Երկնալիր տիրակիր փեսայիդ ազգեա  
 Հայրապետ վեհապետ սուրբ հօրն աւետեա,  
 Այլ և զայս ասա զանցս լեզգեաց յիշեա  
 Զգանձակ խորհեա, զճաւաթ մտածեա  
 Յորոց զԵրևան միշտ մակարերեա:  
 Յասմնական զայրացական վճիռք իմ ելցեն  
 Չեր ոսոխից համախոհից վաղ ժամանեցեն  
 Որք բարեսէրք են կարեկիցք ձեր են  
 Հարազատք մեր են չարագրգիռք չեն՝  
 Զքաղցր սուրբ շնորհ մեր տեսցեն:  
 Ի վերջոյ ի կարծոյ ես բացական չեմ՝  
 Որք աստէն վայելեն զգանձ ձեր ճանաչեմ

Հաշուապահանջ եմ և զանցառու չեմ  
 Ընդ Դաւթի տանջեմ և վտարանջեմ  
 Նա զրէր մուծ՝ բայց ես ճանաչեմ :

ԵՐԿ ԱՌ ՆԻԿՈԼԱՅ ՊԱՒԼՈՎԻՉՆ ԿԸՅՍՐՆ ՌՈՒՍԱՑ .

Ձագար .

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 Պը սա կեալ ի վե լուստ վա յե -

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 լու չ թա զա ւոր Նի կո լա յ

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 Պաւ լո վիչ հը զօր կա յար լու սա -

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 ւոր պատ կեր Տեա ոն Աս տու ծոյ ճըչ -

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 մա ըի տ դա տա ւոր բար եա ց մի -

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 շտ հո վա նի իսկ շար եա ց

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 ա հա ւոր ազգ Հա յո ց մի ա -

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 շունչ զքեզ առ նե ն փա ոա ւոր

Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ Ռ  
 թէ կըր կի ն յադ թու թիւն ե դի ցի

զնո րհաւոր թագեւ պըսա կ  
 կի սա զընտի ս Ռու սայհա յո ց  
 մանաւ անդ հայո ց :

Ահ պատեաց զթշնամին մինչ զդրօշ քո բացեր  
 ԶՊասգեւիչ զՏիպիչ զօրապետ կարգեցեր  
 Ասիա Նլադա մեծ փրկիչ կարգեցեր  
 Երկոցունց զօրութեան զվիշապն վանեցեր : Թագեւ  
 պսակ :  
 Տէր զզոյգ հաստ բազուկ տէրութեանդ շնորհեաց  
 ԶՊասգեւիչ՝ որով նախ զՀայաստան ազատեաց  
 Եւ ապա զփոքրն Ասիա նուաճեաց  
 Զահարկու զօրութիւնս բդեշխից խորտակեաց : Թագեւ :  
 Կատարեալ իմաստիւր Տիպիչն քաջ զօրավար  
 Զանհեա լեառն Նլասայ արահեա ռահ արար  
 Կիտ նման բնակչաց լինէր յոյս կենարար  
 Միշտ յաղթէր միշտ մնայր գտանել հաշտարար : Թագեւ :  
 Անուն քո քաջութեան ընդ ոլորդս բարձրացաւ  
 Մինչ Տիպիչն մեծազօր յարենէ մերձեցաւ  
 Ընդ առման քաղաքին սիրտ տաճկաց ճմլեցաւ  
 Բարձրաձայն քարոզեալ թէ սուլթանն յաղթեցաւ :  
 Թագեւ :

ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Մեջակ :  
 Սարսա փելի բարկու թիւն Տեառըն



մինչմեզ      հասա      նէ      ր      նախչար      արմատ      չէ զօք  
 տունկըն      պարսկին      բուսա      նէր:

Որոյ աճեալ փշովք զսիրտ մեր խայթահարէր  
 Ծմեալ զագոխն՝ զգառն մրուր մեզ արբուցանէր,  
 Այս պատուհաս արժանահաս ո՛հ առ մեզ եհաս  
 Զարթիցէ նոր ողբս երգեսցէ հինն Երեմիաս:  
 Երկրորդ՝ իբրև յիշեալ չարիք փոքր ինչ հեռացան  
 Ըստ նոյն ցասման տարերք երկրի չարախառնեցան,  
 Վասն որոյ բոյսք արտօրէից իսպառ չորացան  
 Եկն սոփն չքաւորաց հոգիք քաղեցան: Այս պատուհաս:  
 Բենասար այս մեծ պատուհաս յորժամ անցանէր  
 Յետ սակաւուց մահ տարաժամ իսկոյն ժամանէր,  
 Ոչ խտրելով զմեծն և զփոքրն ի կենաց հանէր  
 ԶՄնացորդան յերկրէ յերկիր հերքեալ հալածէր: Այս  
 պատուհաս:

Օր բստ օրէ շնչաւորիլ բնակիչք յուսային  
 Զորրորդ՝ զանհուն ապրանս յանկարծ հրոյ ճարակ  
 տային:

Այս բացայայտ աղաղակ էր օրինաւորին  
 Զի բազումք յայնց զկողմն ունէին չար անօրինին: Այս  
 պատուհաս:

Բարեխրատ և արդար տէրն նորոգ զայրացաւ  
 Նոյն ժանտ ախտն յետ սակաւուց կրկին գոյացաւ  
 Ագահութեանց՝ որով մեզաք թիւն լրացաւ  
 Ըստ յանցանաց արժանապէս պատիժ հատուցաւ: Այս  
 պատուհաս:

Էր հազար ութ հարիւր և չորս, օրն նոր տարի  
 Մինչի Մուխրանն ի կարճոյ զայս յայտ արարի:

Ըստ եղանակին որպէս ի չիրիչիրն ձայնի  
Անուն խոնարհ յօրինողիս դիտողաց յայտնի: Այս պա՛:

## ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Մանր.

Սի րոյ լուսոյն անկէզ բնութեան ծագեալ  
ի սի րա կայսե լութեան:

Ելոյժ զսէր վրէժխնդրութեան  
Ընդդէմ Պարսկին եղեռնութեան  
Սպաս կալեալ յառաջ մատեայց  
Ազգին իմ տալ ձայն աւետեաց:  
Ելէք տեսէք զլոյս տունջեան  
Փախեաւ զիշերն հին մթութեան  
Մերձ էր Պարսկին օր կորստեան  
Ծաւել զգործ յիմարութեան: Սպաս կալեալ  
Բամից Հայոց մեծ բազմութեան  
Ներքոյ գանից չար բռնութեան  
Ծաւէտ բողբոջ հեղման արեան  
Հասին յունկս արդարութեան: Սպաս կալեալ  
Ուռն ոսկի էր ի բաղխման  
Սրբոյ գահին աստուածիջեան  
Որով զարթոյց Աստուածն Բան  
Զկայսն՝ առնուլ զիւր դատաստան: Սպաս կալեալ  
Վաղքաջ յարեաւ դէմ բռնութեան  
Նիկողայոս քաջ Պօղոսեան  
Թագ և պարծանք արքայութեան  
Տէր և փրկիչ Արամազնեան: Սպաս կալեալ  
Բացաւ զբոշիւ խաչելութեան

Մուտ յասպարէզ վրէժինդրութեան  
 Վանեաց զինու արիութեան  
 Զխուժան Պարսից խռովութեան: Սպաս կալեալ:  
 Էր այս մեծ գործ քաջ յաղթութեան  
 Պտուղ լացից ողբերգութեան  
 Վեհին Հայոց սրբազնութեան  
 Որ կայր յահէ ի թագստեան  
 Զգեցեալ զքուրձ այրիութեան  
 Ի փուշ Հաղբատայ ներձգնութեան: Սպաս կալեալ:

ՈԳԵԱԼ Ի ՍԵՐՈՎԲԷ ԼԱՅՐ ՎԱՐԺԱՊԵՏԷ

Ձագա-ոյ Զահր.

Ն Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր  
 \* Ըս տու գի ա ս տէ ն րան Սո-

Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր  
 զո մո նի պի զծ են չա րա-

Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր  
 գո ըծք ա ո թա գա ւո ըի իսկար-

Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր  
 դար շըլ թու նք ենը ն դու նե-

Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր Ե՛ր  
 լի զի ա թո ո նո րա նո վաւ Հաս-

Ե՛ր Ե՛ր  
 տա տի:

\* Պէտք է կարդալ «Ստուգի»:

Թագաւոր զգօն ցրումն ամբարշտաց  
 Անձնագիրն նոցին ըստ ճիշտ առակաց:  
 Երկինք և երկիր են վկայ դաշանց  
 Զորով ոչ միայն ձգտիս առնել զանց  
 Այլ և հակառակ տէրութեան փառաց  
 Առնես պատասխան ընդդէմ պահանջմանց: Թագաւոր  
 զգօն:

Բամից քրիստոսեանց լցար ճոխութեամբ  
 Ժրժեղով զարիւնս անյագ մոլութեամբ  
 Դարձեալ ծարաւիս հին ջրգողութեամբ  
 Գործես ճապաղիս անօրէնութեամբ:  
 Արքայ իմաստուն ձիր ամբարշտաց  
 Անձնագիրն նոցին ըստ ճիշտ առակաց:  
 Ողբալի տոհմէն զանուանի աիւզեանց  
 Եւ ցոյց ունին քո կարծ գանձու զգաց,  
 Ահա սեաւ վճիռ և շար ընթերցուած  
 Գլուխ առ դրամբ պալատան անկած: Արքայ իմաստուն:  
 Վերին տեսչութիւն երաց զիւր ատեան  
 Ըստ արդարութեան արար դատաստան  
 Յարոյց ի վերայ քո զՌուսաստան  
 Զուր ի նորակերտ զօրդ սպաստան: Կայսր իմաստուն:  
 Բոցք արդարութեանն ցոլմամբ բորբոքին  
 Հայոց զօրավարք պետք կացուցանին  
 Որք ուղերձ-կաշառս երբէք չընդունին  
 Ել Լասւասիայ համակ պաշարին: Թագաւոր զգօն:  
 Էր յոյս պաշարոյ կիրճ Դարգարանի:  
 Փոյթ նաւատորմիդ և զայն անձս ունի  
 Փոյթ նաւահանդէս վաղ հուրբ կիզանի  
 Ամենայն ուստէք յոյս քո հատանի: Թագաւոր զգօն:  
 Վաղ տրամադրեալ սով գուշակեցեր  
 Անդ քեզ անվայել սուտ պատճառ կացեր  
 Զհազարաւորս յաքսորս վարեցեր

Զորոց ազադակս առ տէր հասուցեր: Արքայ իմաստուն:  
Տիպիչն յաղթկու զօրս յառաջ վարէր

Զքաղաքս առեալ զզօրս զիշեր՝

Զդուքս զբղեշխ կալեալ ազատէր

Դարձի և զզման քո միշտ սպասէր: Արքայ իմաստուն:

Պասքեիչն հզօր սիգալով ճեմէ

Սլայոց և Կարուց զամբոցսն աւերէ.

Անդուստ հուպ ընդ հուպ ի Կարին հասանէ

ԶԱսիայն բոլոր ահիւ սասանէ: Կայսր իմաստուն:

Պոնտոսին շաւիղ չե ևս հարթեալ

Լուր Անդրիանուպօլսոյ քեզ հասեալ

Թէ այսքան բղեշխք զինեալ վաստակեալ

Ծտուն զերկրորդ գահդ անձնատուր եղեալ: Կայսր իմաստուն:

Անտի Ռետեստօն մին երեւեցաւ

Ահա սարսափաւ դրօշ քո բացաւ

Յորմէ ազգ Տաճկաց հրաժարեցաւ

Որով ահ և նենգ նոցին յայտնեցաւ: Թագաւոր զգօն:

Տարրեր ի բարուցդ լոյս խոստովանիս

Զաջդ չպարտութիւն հաշտութիւն կամիս

ԶԵրոպեան դեսպանս մեծ միջնորդ ունիս

Առ ծանր պայմանս փողվաղ զիջանիս: Թագաւոր զգօն:

Կայսերն Ռուսաց զահեղ զօրութիւն

ԶՆիկոլայի Թագաւորութիւն (խրատու կարգեաց)

Խրատու կարգեաց վերին տեսչութիւն

Ուղղել զՕսմանեանդ ինչ ինչ թերութիւն: Արքայ իմաստուն:

Այսուհետեւ ձեզ ցցունս արկանել

Է որպէս յայլոց ընդ փող մտանել

Պատկան դատիմ՝ զայն կայսեր նուիրել

Նւ զարձան նորա հանգէպ քեզ կանգնել: Արքայ իմաստուն:

Նանրացաւ հաչակ Սուլթան Մահմուտի

Բազմաց ահարկու կողմանցն հատի

Բարձրացօնըն յոյն դիպեցաւ բաղդի

Յանրուժեի վէրս Օսմանեան սրախ: Կայսր իմաստուն:

## ՏԱՂ ԿԱՐՕՏՈՎ ԴԱՐԻՊԻ

Մեզմէ Վախար.

ԲՐ Դ ԲԵՒ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ  
Սըր տի կը ս խո ցեալ է

ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ  
սի րով տէրտ տէ րտ ու նի-

ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ ԲՆՆ  
մ շատ ե լ յո լով:

Եկեալ յօտար երկիր ճորով նմա կարօտով: կարօտով:

Ի տուէ և ի գիշերի սիրտս անգագար բռնեալ կայր:

Ի ծնեալ սընեալ տեղւոյս հեռի մնացի կարօտով:

Մարդ մի չունիմ խրատող բարի սիրտս նովաւ մխի-  
թարի:

Օտար երկիր այսքան տարի մնացի կարօտով:

Եղէ ես բու ըստ սաղմոսի տըքնեցայ միայն ի տանիս

Յիշեցի ծընողքս և զսիրելիս լացի կարօտով:

Ողբալի բաներ շատ քաշեցի զկեանքս ընդունայն մաշեցի:

Ղարիպութեան մահն յիշեցի լացի կարօտով:

Մայեցայ սեղանոյ ի վերայ սեղանոյ բազմեալ է հետ իւր  
իր սիրելւոյ:

Զկարցի մերձ ի հացի և ջրոյ մնացի կարօտով:

Իսկ և իսկ վարանեալ շրջիմ, ցայգ և ցերեկ յիշեմ  
զտունս իմ:

Դաւթի նման զանկողինս իմ թացի կարօտով:

Է զարիպն զկնոջն րեվան, յանդիմանողքն ունին գերան  
Վասն այսորիկ այսօր բերան բացի կարօտով:

## ԵՐԳ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ

Մանր.

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 Տիրա ծի նկո -  
 \* Իդէ մ՛ Ո ըդւո -

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 յ՞ն \* իկա չի ն լա յԼ՛

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 տը րա մա գի ն

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 տե ս եա լ ըզնա

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 ծա րա ւե ցեա -

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 լ գոռա-

Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 յԼ՛ դ՞ չէ ր ցա ւա-

Դ՛ն Դ՛ն Դ՛ն  
 գի ն .

Եւ ըզփուշ պսակն վերադիտեալ ձայնէր Յիսուս միածին,  
 Աղետալի դիմօք ողբայր և ասէր, ո՛հ որդեակ իմ, որ-  
 դեակ իմ ո՛հ:

Իմ աննըման Յիսուս Որդի միշտ յաւիտեան բաղձալի,  
 Տեսանելով ի գլուխ քո փշեայ պսակ սոսկալի  
 Վիրաւորեալ աղիք ծնողիս կսկծալով զալարի,

Աղետալի դիմօք ողբայր և ասէր, ո՛հ որդեակ իմ, որ-  
դեակ իմ ո՛հ:

Մեջևէ շափառայր:

ՊՊՊՊՊՊ ՊՊ ՊՊՊՊ ՊՊՊ ը ՊՊՊՊՊՊ ՊՊ  
Տէր " զո՞ր ը մեա տէր "

ՊՊՊՊՊՊ ՊՊՊ ՊՊ ՊՊՊՊՊՊ ՊՊ ՊՊՊՊ ՊՊՊ  
զո՞ր մեա տէր " զո՞ր ը մեա

ը ՊՊՊՊՊՊ ՊՊ ՊՊՊՊՊՊ ՊՊՊՊՊ ՊՊՊ  
տէր " զո՞ր ը մեա տէր -

ը ՊՊ ՊՊՊՊ ՊՊՊՊ ՊՊՊՊ ՊՊՊ ը .  
ր " զո՞ր ը մեա:

Չափառայր:

ՊՊ ը ՊՊ ը ը ը ը ը ը ը ը ը  
Տէր " զո՞ր մեա տէր " զո՞ր -

ՊՊՊ ը ը ը ը ը ը ը ը ը ը  
մեա տէր "

ՊՊՊՊՊ ը ը ը ը ը ը ը ը ը ը  
զո՞ր ը մեա տէր " -

ՊՊ ը ը ը ը ը ը ը .  
զո՞ր ը մեա.

Մեջևէ:

ՊՊ ը ը ը ը ը ը ը ը ը ը  
Տէր " զո՞ր ը մեա

ՊՊ ը ը ը ը ը ը ը ը ը ը  
տէր " զո՞ր ը մեա տէր " զո՞ր -







Բ Թ Գ Ծ Ը Կ Լ Խ Ծ Ծ  
 ըզ գե ցեալ պայ ծա ուս ցաւ յայդ լեռ նե-

ծա Ծ Ծ Բ Թ Թ  
 րէդ ի վայր փու թաս.

Թաւուրս գարնան պարեալ ցընծաս  
 Նախշուն ձագերով շուրջ կուգաս  
 Արագ արագ ոստոստելով  
 Ժողկանց վերայ թաւանելով,  
 Վասն ո՞յր թռչիս, ընդէ՛ր փախչիս  
 Կամ զի՞ թագչիս կողկողալով  
 Չայն արձակես շողկղայ կաղկղայ  
 Շաղկղայ կաղկղայ միշտ հառաչես ու կարկաչես:  
 Ոսկիափայլ փետուր քոյին  
 Զանազան գունով շողշողին  
 Որպէս զլոյս բոլորովին  
 Եայդ լեռներէդ ի վայր փութաս  
 Թաւուրս գարնան պարեալ ցընծաս: Ինչպէս ձագերով ելն.  
 Փառօք ճեմիս որպէս իշխան  
 Լերինքն քեզ հարկ սեպհական  
 Դաշտերն ամեն համանգամայն: Եայդ լեռներէդ ելն:  
 Ժիծաղաձայն քաղցրիկ թռչուն  
 Զքնաղատիպ և յոյժ սիրուն  
 Ի մէջ ծողկանց ննջես ի քուն: Եայդ լեռներէդ ելն:  
 Վարդն ու շուշանքն շաղամած  
 Եւ մանուշակն անտառից  
 Բարձք անկողինք քեզ վայելեաց: Եայդ լեռներէդ ելն:  
 Կարկաչաձայն այդ ձայն քո սուրբ  
 Տոչորէ զիս սիրոյ քո հուրբ  
 Կես զովանալ արտասուաց ջուրբ: Եայդ լեռներէդ ելն:





## Յ Ա Ն Կ

Հմտ.		Երևու
1	Աստուածածին ամենօրհնեալ . . . . .	1
2	Ահա արծիւ թևատարած . . . . .	3
3	Աշնան առաւօտ . . . . .	4
4	Այսօր ցնծան արարածք . . . . .	—
5	Առաւօտ լուսարեք . . . . .	5
6	Արև լուսատու . . . . .	6
7	Բաղձալի սուրբ կոյս . . . . .	7
8	Բարի եկիր իմ պատուական . . . . .	8
9	Գոհանամք զքէն տէր . . . . .	9
10	Գոհանամք զքէն տէր . . . . .	—
11	Գոհանամք զքէն տէր . . . . .	10
12	Դարձեալ յայտնի . . . . .	11
13	Եմ սեւացեալ . . . . .	12
14	Ես միանգամ կուլամ քեզ համար . . . . .	13
15	Երգեցէք ազգ Հայոց . . . . .	14
16	Թագ փառաց մերոց . . . . .	15
17	Ի խաչ ելեալ բեւեռեցար . . . . .	16
18	Ի կանխագէտ տեսչութենէ . . . . .	17
19	Խնդայ այսօր Հայաստան . . . . .	18
20	Խաչն ի նախնու մն . . . . .	19
21	Ծագեա հեղիկ . . . . .	20
22	Պանայք ամենայն . . . . .	21
23	Հայրապետաց հանուրց . . . . .	22
24	Հայրենասէր Արամեանք . . . . .	23
25	Հաւիկ մի պայծառ տեսի . . . . .	24
26	Հեռացել եմ իմ մայրենի . . . . .	25
27	Հուրըն սերոյ . . . . .	26
28	Հրճուիմք այսօր . . . . .	27
29	Ճանապարհ բարի Քրիստոս . . . . .	29

30	Ճանապարհ բարի Քրիստոս . . . . .	—
31	Մայր հաւատոյ . . . . .	31
32	Մայր ցանկալի . . . . .	32
33	Մարիամ կոյս . . . . .	33
34	Մարիամ Մողղաղենին . . . . .	34
35	Միաշաբաթ օր հանդստեան . . . . .	35
36	Յայգւոյն միաշաբաթին . . . . .	36
37	Յառաջ քան զբարերար . . . . .	37
38	Յարեաւ յաւուր երբորդի . . . . .	39
39	Յարուցելոյդ ալէլուիա . . . . .	40
40	Յերկու ձեռին երկու մամ . . . . .	41
41	Յորժամ եղև գարուն . . . . .	42
42	Նեո թափանձիկ . . . . .	43
43	Ներհիւսեացուք . . . . .	44
44	Ննջեա որդեակ . . . . .	45
45	Ոհ իսկականին . . . . .	48
46	Որ արարեր զիս ի պատկեր . . . . .	49
47	Ուր ես մայր իմ . . . . .	—
48	Ուր ես որդեակ . . . . .	50
49	Պաշտելի տօնելի . . . . .	51
50	Պըսակեալ ի վերուստ . . . . .	53
51	Սարսափելի բարկութիւն . . . . .	54
52	Սիրոյ լուսոյն . . . . .	56
53	Ստուգի աստէն . . . . .	57
54	Սրտիկս խոցեալ է . . . . .	60
55	Տիրածին կոյս . . . . .	61
56	Տէր ողորմեա . . . . .	62
57	Տէր ողորմեա . . . . .	—
58	Տէր ողորմեա . . . . .	—
59	Տէր ողորմեա . . . . .	63
60	Փառաց տեղի . . . . .	—
61	Փութա առ մեզ . . . . .	64
62		
63		
64		
65		
66		
67		
68		
69		





